



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



281.6

4-70

1861



81.6  
1.70

ԿՈՆԴԱԿ

ՊԱՏՐԻԱՐ ԲԱԿԱՆ

ԵՒ

ԿԸՆՈՆԸԳԻՐԻՔ

ՀԱՐՍԱՆԵԱՑ

ՈՐ

Հաստատեցաւ յօգուտ Ազգիս աշխատութեամբ  
Ազգային երկուց խողովոց Եկեղեցականաց  
և աշխարհականաց .

Եւ

Հրամանաւ

Տեառն Սարգսի Սրբազան Արհիեպիսկոպոսի  
Ազգասէր և Վեհափառ Պատրիարքի  
Կոստանդնուպօլսոյ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՅԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ՓՐԿՉԻ

- 1861 -

См. 67

Удмуртский Государственный

Университет, 30-5-1973

Генеральный фонд

326-42

~~61799 ш. 2~~



520-74



ՊՏՐՐԻ



ՏԵՐ ՍԱՐԳԻՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԷ  
ԵՒ Ի....., Է

Մեծի Արքայանիստ Մայրաքաղաքիս  
Կոստանդնուպօլսոյ :

Յորմէ տիրանուէր ողջունիւ և  
օրհնութեամբ յայտարարութիւն լի-  
ցի համօրէն Ազգիս լրութեան, շնոր-  
հափայլ Քարոզիչ վարդապետաց,  
խոհեմազարդ Քահանայից, ազգախը-  
նամ Իշխանապետաց, պերճապատիւ  
Իշխանաց, յարգելի Արհեստաւո-  
րաց, և համայն բարեպաշտօն ժո-  
ղովրդոցդ արանց և կանանց, որ  
Թագաւորեալ Մայրաքաղաքիս մէջ

լով ծանր ու սիրտ կոտորող խօսքեր  
 կ'ընեն փեսային կամ անոր ծնողացը  
 ըսելով թէ՛ այս ըռզակը քիչ ու ան-  
 վայել է՛ մեր աղջկանը . և երբեմն  
 ալ փեսային կողմէն ատելու թիւն  
 ցոյց կուտան հարսին կամ անոր ծնո-  
 ղացը՝ ըսելով թէ՛ բերած օժիտը  
 (ճէհէզը) քիչ է, ու իրեն չի վայլեր .  
 հապա ուր թողունք ստակի առու-  
 տուրով ամուսնացելոց երկու կողմէն  
 եղած սոսկալի կռիւները :

Ահա այս կերպ անվայել խռովու-  
 թիւնները երկու կողմէն արմատանա-  
 լով՝ շատ անգամ պատահած կայ որ՝  
 նորապսակ առն և կնոջ մէջ ալ կը  
 մտնէ զզուելի ատելու թիւն մը , և  
 իրենց հոգևոր կորստեանը ու մարմ-  
 նաւոր թշուառութեանն ալ պատճառ  
 կ'ըլլայ :

Հապա՛ այն Հարսնիքի տէրերուն  
 բրած աւելորդ ծախքերը ( մասրաֆ-  
 ները ) որ կընեն անմտադրութեամբ՝  
 թէ ըռզակի և թէ (ճէհէզի) կամ չըն-  
 չին ու անպիտան հանդէսներու հա-



մար, իրենք զիրենք կամօք կը ձգեն  
աղքատութեան ու պարտուց խոր-  
խորատը, և կը տառապին չարաչար  
յուսահատութեամբ: Վասն զի շատ  
զաւկի տէր եղողը՝ անգամ մը ըրածը  
չըրածը չի գիտնալով, ու անպիտան  
կարծիքներով իրեն կարողութենէն  
վեր ծախքեր ընելով՝ հազիւ թէ մէկ  
զաւակը կրնայ ամուսնացնել, ու միւս  
զաւկները կը թողու անխնամ որով-  
հետեւ կ'ուզէ որ անոնք ալ առջինին  
նման մեծամեծ ծախքերով ու սնոտի  
հանդերձանքներով ամուսնացրնէ. և  
զի ժամանակը չի ներեր կամ կարո-  
ղութիւնը չի տանիր՝ ակամայ երեսի  
վրայ թողուլ կը պարտաւորի. ուրկէ  
ինչ խելքէ դուրս սարաձայնութիւն  
և պէս պէս չարիք կը հետեւին նէ՛  
յայտնի է:

Իսկ մէկ զաւակ մը ունեցողը այն  
անկարգ և մնասակար սովորութիւն-  
ներուն համար՝ որ Ազգիս մէջ ար-  
մատացեալ է, շատ ստակէ ելլելով  
ուրիշներէն մար չի մնայու համար՝

ինքն ալ անգգուշաբար կ'իյնայ աղ-  
քատուծեան մէջ, ու թշուառ յու-  
սահատուծեամբ թէպէտ կը զղջայ  
իւր զաւակը ամուսնացընելուն. բայց  
իւր կարողութիւնը ձեռքը չանցնե-  
լէն ետեւ, ողորմելի կենօք մահուն կը  
փափաքի՝ որ տառապանքէն ազատի :

Այնպիսի մարդը՝ չէ թէ մինակ իր  
անձին կը վնասէ, այլ և ընկերին. չէ  
թէ լոկ իր վարկումը (իթիպարը) կը  
կորսնցնէ, այլ և բարեկամին ալ մեծ  
գայթակղութիւն կուտայ, որ իրեն  
հաւասարները կամ թէ արհեստա-  
կիցները անկէ վար չի մնալու համար՝  
կը ջանան որ անոր նման՝ կամ աւելի  
աղէկ ըրած ըլլան իրենց Հարսնիքը.  
որով կուրաբար իրենք ալ կ'իյնան  
նոյն թշուառութեան խորխորատը և  
մեծ նեղութիւն կը քաշեն, միանգա-  
մայն կորսնցնելով իրենց պատիւը հա-  
սարակութեան առջին :


Ահա ասանկ սնոտի և վնասակար  
սովորութեանց գործածութիւնովը  
Ազգիս հասարակութեան կրած գէշ

հետևանքները ընդհանուր Ազգիս  
 Հոգևորական և մարմնաւորական Ժողովներուն յայտնի ըլլալուն, այս անգամ կրկին և կրկին խորհրդակցութեամբ հասարակաց օգտին համար Ազգային Ժողովին մէջ խօսուեցաւ, և Հարսանեաց բարեկարգութեան համար յատկապէս որոշակի կանոնադրութիւն հաստատուեցաւ, և ամեն մէկուն ընելիք ծախքերը և Հարսանեաց կերպը՝ ութ աստիճանի կարգաւ նշանակելով, նորոգ տպագրեցաւ այս Անդակը. որպէս զի իւրաքանչիւր ոք իր կարողութեանը համեմատ շարժելով գոնէ առ այժմ՝ աղքատութեան գլխաւոր պատճառներէն մէկը Ազգիս վրայէն վերնայ, ու հասարակութեան բարեկարգ զարգացմանը յոյսերնիս հաստատ ըլլայ :

Ուստի սիրովն Յիսուսի կը յորդորեմ ամենքնիդ ալ, որ այս նորոգ սահմանեալ կանոնադրութեանցս հակառակ վարմունք չընելով առանց զանցառութեան ձեր պարտաւորու-

Թիւնը կատարէք հնազանդութեամբ .  
որով և Ազգային բարեկարգութեանց  
յառաջադիմութեանը օգնական ըլ-  
լալով Ազգիս փառք ու պատիւը ե-  
ւելցրնէք :

Ողջ լերուք և օրհնեալք յԱստու-  
ծոյ, և յամենայն սրբոց նորա, և 'ի  
մէնջ. ամէն :




## ՍԱՀՄԱՆՔ ԵՒ ԿԱՆՈՆՔ

ՈՐՈՆՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱՆ ՀԱՐՍԱՆԵԱՑ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ

Յամին 1848 Մայիս 18



ԿԱՆՈՆ Ա.

Ազգակործան չար սովորութիւն-  
մը նոր հնարեր են ոմանք, որ աղջը-  
կան կողմը մինչև դրամ, կամ տուն  
և կամ խանութ իբրև Երախօժա անու-  
նով չըլլայ նէ՝ չեն ուզեր պսակիլ. որ  
այս անպատէհ սովորութիւնը օտար

ազգէ նոր մտած է մեր մէջը . աս  
 բանին համար խստիւ կը պատուի-  
 ընք՝ որ բնաւ երբէք ստակ մը չի  
 պիտի օրուի աղջկան կողմանէ փեսայ  
 եղողին, վասն զի թէ որ փեսացուն  
 անով պիտի շահուի, ու ինքը մինչև  
 այն ժամանակը վաստկող մէկը չէ նէ,  
 անկէ ետև ալ չարագոյն թշուառու  
 թեանց մէջ իյնալիքը յայտնի է. ուս-  
 տի առաջուց մտածելը խելացութիւն  
 է՝ թէ այն ստակը հատնի նէ ինչ պի-  
 տի ընէ . ուրեմն Ազգին աղքատ  
 տուն մը եւելցնելովը՝ ինքը շահ մը  
 չնելէն զատ՝ մեծ վնաս ըրած կը սեպ-  
 ուի : Բայց թէ որ վաստրկվոր է, ու  
 աղջկան քիչ կամ շատ ստակին կարօտ  
 չէ, ու կ'ուզէ որ այն կերպով ստակը  
 ձեռքը անցընէ, այնպիսին ալ ազա-  
 հութեան ոգի ունենալովը, ամուս-  
 նական սիրոյ կապը իր ազահութեք  
 միջոց մը բռնած է : Աւստի այսպիսի  
 անվայելուչ ճամբայ բռնող մարդիկ՝  
 աւելի թշուառ եղեր են իրենց կեն-  
 ցաղավարութեանը մէջ՝ քան թէ եր-

Չանիկ . վասն զի ամուսնացելոց խա-  
ղաղութիւնը դրամով չի հաստատուիր,  
այլ ճշմարիտ սուրբ սիրով որն որ  
Քրիստոս օրինակ կուտայ իր Եկեղեց-  
ւոյն, և սրբազան Առաքեալը յորդոր  
կուտայ մարդիկներուն, որ իրենց  
կնիկները սիրոյն խնամօք պատուեն .  
և կնիկներուն ալ կը պատուիրէ՝ որ  
իրենց տիրոջը հնազանդ կենան ամեն  
կերպիւ :

Ահա այս է ամուսնացելոց առա-  
ջին և հարկաւոր պարտքը . ուրեմն  
վայ է անոնց՝ որ այս պարտաւորու-  
թիւննին չի ճանչնալով, իրենց զա-  
ւակը թշուառութեան խորխորատը  
ձեռքովն կը ձգեն. զանոնք ստա-  
կով ամուսնացուցանելով :

Ուստի ինչպէս որ Սուրբ Եկեղեց-  
ւոյն օրինաց դէմ է այս սիրոյ կապը  
քակուելու պատճառը, անանկ ալ  
համօրէն Ազգիս անընդունելի է այս  
չար սովորութիւնը, որ ստակով հաս-  
տատել կ'ուզեն իրենց սուրբ Պսակի  
խորհուրդը : Ասոր համար կը պարտա-

Լորեմք մեր ազգայինները . որ ոչ  
 աղջկան կողմէն ստակ տրուի, և ոչ  
 փեսին կողմէն ստակով աղջիկ փրն-  
 տուի. անկէ 'ի զատ՝ որ հայրենա-  
 կան ժառանգութիւն ունի աղջիկը,  
 այն ալ շատ աղէկ կ'ըլլար անանկ  
 կարգի մը դնել՝ որ իրենց հաստատուն  
 եկամուտ մը ճարելով ձեռքերնին ե-  
 ղածը չի կորսնցունէին: Եւ թէ մէկը  
 յանդգնի այս կանոնին դէմ, լսած  
 նուս պէս անաչառ պիտի պատժեմք  
 Ժողովով:

ԿԱՆՈՆ Բ .

Ինչպէս որ Ազգային սովորութիւն  
 է, նշանտուքը միշտ պիտի ըլլայ  
 Ուրբաթ օր Պատրիարքարանին մէջ,  
 և ամուսնացող անձանց տաներէց քա-  
 հանաները, ու երկու կողմէն մեր-  
 ձաւոր ազգականները պիտի գտնուին:

ԿԱՆՈՆ Գ .

Մինչև այսօր Ազգիս մէջ նշան-  
 տուքի համար որոշուած խորհրդա-  
 ւոր կանոն մը չի կար, միայն ոսկի

գրուեր էր նշան ըլլալու համար, այն  
ալ իւրաքանչիւրոց իրենց կամացը  
համեմատ աւելորդ ծախքերով :

Աստի Ազգային Ժողովը խորհրդա-  
ւոր բան մը ընելու համար, և մա-  
նաւանդ հասարակաց օգուտը նայե-  
լով սահմանեց թէ նշանը ըլլայ խաչ,  
և այն խաչը առնուի աղքատաց հա-  
մար սահմանեալ Ազգային գանձա-  
նակին յարգի տեսուչներէն, որ ութ  
աստիճանի կանոնով՝ արժէքին կող-  
մանէ ալ ութը կերպ տարբերութիւն  
ունի. և նոյն արժէքէն՝ խաչին ծախ-  
քը հանելով, և աւելորդը աղքա-  
տաց և որք աղջկանց գանձանակին  
անպատճառ պիտի տրուի, հաշիւը ու-  
րոշեալ ցուցակի մը մէջ յայտնի նը-  
շանակելով : Եւ քահանայից ևս խա-  
չին աստիճանին նայելով՝ նուէր պիտի  
տրուի այսպէս :



Խաչերուն արժէքին տար-  
բերութիւնը և նշանտու-  
քի ու թէ փեսացուն և  
թէ հարսնացուն կողմանէ  
իրենց տաներէց քահանա-  
յին տրուելու նուէրը :

Խաչե-  
րուն  
արժէքը

Նուէր  
քահա-  
նայից

Առաջին աստիճանի վերին  
անձանց (էլա) . . . . .  
Երկրորդինը . . . . .  
Առաջին աստիճանի միջակ  
անձանց (էլա էսնաֆին)  
Երկրորդինը . . . . .  
Առաջին կարգի միջակ ան-  
ձանց (էվսատ էսնաֆին)  
Երկրորդինը . . . . .  
Առաջին կարգի ստորին ան-  
ձանց (էսնա էսնաֆին)  
Երկրորդինը . . . . .

Ղրշ .

Ղրշ .

600

ըստ հա-

ճոյից

400

100

300

75

200

50

150

40

100

35

75

30

8 ըի

20

Եւ այս նշանտուութեան օրը ինչ  
աստիճան խաչ առնէ փեսացուն նէ,  
նոյն աստիճանի կէս գինը ևս պիտի  
շնորհէ Ազգային Հիւանդանոցի խըղ-  
ճալեաց հացագին ըլլալու համար .  
նոյնչափ ևս հարսնացուն կողմէն ալ  
պիտի շնորհեն որ Ազգային Հիւան-  
դանոցի աղքատաց համար է. միայն


վարի աստիճանին ներուած է՝ այն ուղորմութեան շնորհը իրենց կամացը յանձնելով :

ԿԱՆՈՆ Դ .

Ինչպէս որ յայտնի է, Հարսանեաց մէջ կատարուելու գլխաւոր գործը Պսակի խորհուրդն է և Պսակը ընողն ալ տաներէց Քահանայն կ'ըլլայ, որ իւր պաշտօնը հոգեորապէս կատարելովը, Հարսանեաց տէրերն ալ կը պարտաւորին իրենց շնորհապարտութիւնը ցուցընելու մտօք անոր մէկ նուէրք մը մարմնաւորապէս ընծայել, որն որ ժողովրդատէր Քահանային անժխտելի իրաւունքն է . որովհետեւ Քահանայք ալ ժողովրդոց կամաւոր տուրքէն պիտի շահուին, ինչպէս Սրբազան Առաքեալը բացարձակ կը գրէ «մենք ձեր մէջը հոգեորը կը սերմանեմք՝ մե՞ծ բան մըն է ձեզմէ մարմնաւորը հնձել՝ այսինքն, ընդունիլ» . և յիրաւի թէ որ հոգին մարմինէն մեծ է, Քահանայից հոգեորական գործերն ալ մեծ համար-

ուելով ստակով չի փոխանակուիր .  
 միայն թէ սիրով և յօժարութեամբ  
 զանազան առիթներու մէջ անոնց վը-  
 ճարելու է բաւական նուէր մը որ  
 կարող ըլլան իրենց պիտոյքը հոգալու :

Ահա այնպիսի առիթներէն մէկն  
 ալ Հարսանեաց արարողութիւնն է ,  
 որուն համար մինչև հիմա կանոնաւոր  
 որոշում մը եղած չըլլալով , արտա-  
 ոոց սովորութիւններ մտած էր Հար-  
 սանեաց մէջը : Այն անպատշաճ գոր-  
 ծերը ստակ տալու միջոց մը ըլլալով  
 Հարսնիքին տունը մէկ անօրինակ ըզ-  
 բօսարանի տեղ կը նմանէր . ու Պը-  
 րակի խորհուրդին յարգը կ'աւերէր .  
 վասն որոյ այժմ միայն թագաւորութե  
 ժամանակը քահանայն օրհնեալ Գի-  
 նի պիտի տայ պսակելոց և հարսնեւո-  
 րաց որ քրիստոնէական ուղղափառ  
 եկեղեցւոյ հին բարեպաշտական ա-  
 րարողութիւնն է : Արև յայնժամ կա-  
 մաւոր նուէր մը կը տրուի : Իսկ Հար-  
 սանեաց համար տրուելու նուէրքին  
 չափը , իւրաքանչիւր անձանց տուած



520-74

նշանի խաչին աստիճանին նայելով պի-  
տի ըլլայ :

Հարսնախօսուլթեան ա- ւուր որոշեալ տուրքը, որ անպատճառ պիտի վճառ- ուի :	Հարսնախօ սուլթիւն :	Հարսա- նիք :
	ՂԵԶ . ըստ հաճո- յից :	ՂԵԶ .
Առաջին աստիճանի (էլա)		
Երկրորդինը . . . . .	100	600
Ա . աստի . (էլա էսնաֆին)	75	500
Երկրորդինը . . . . .	50	350
Ա . կարգի (էվսատ էսնաֆ)	40	250
Երկրորդինը . . . . .	55	200
Ա . կարգի (էտնա էսնաֆ)	50	150
Երկրորդինը . . . . .	20	150

Ահա աս որոշեալ տուրքերը կամ  
փեսայացուն կամ անոր կողմէն մէկը  
պիտի վճարէ անպատճառ իր տանե-  
րէցին, հրամանագիր առնուած օրը .  
նոյնպէս հարսնացու ազջկան ծնողքը  
կամ անոնց կողմէն մէկը պիտի վճա-  
րեն այն օրը ազջկան տաներէցին, այս  
որոշեալ տուրքերը, ինչ աստիճանի  
արժանաւոր են նէ, որովհետեւ երկու

կողմի տաներէցները զատ պաշտօն  
 ունին, զատ զատ պիտի ընդունին իւ  
 րենց ժողովուրդին նուէրը կանոնեալ  
 կերպով. իսկ Տնանկ աղքատաց Հարս  
 նիքները ճրի պիտի կատարուի ըստ  
 ամենայնի :

Այլ թէ ոմանք անհոգ մարդիկ  
 ինչպէս որ լսած եմք, ըսեն թէ այսօր  
 կամ վաղը պատրաստու թիւն չունիմք  
 վճարելու մեր պարտքը՝ օր աւուր  
 երկարաձգելու մտօք, այնպիսեաց հա  
 մար ալ կը յորդորեմք՝ որովհետե  
 ուրիշ աւելորդ ծախքեր ընելու չեն,  
 հարկաւ քահանային տալու որոշեալ  
 տուրքը փութով հատուցանեն : Ասե  
 ժողովով արժան տեսնուեցաւ որ  
 Հարսանեաց հրամանի թէ զքիրէ ա  
 ռած օրը յատուկ Պատրիարքարանի  
 նուէրը մի ալ տրուի :

Առաջին աստիճանի ըստ հաճոյից զըշ .

Երեւոյտ	”	.....	300	”
Երեւոյտ	”	.....	200	”
Գորբոյտ	”	.....	150	”
Նիգեւոյտ	”	.....	100	”

Ու եյերորդ	” . . . . .	75	”
Եօթներորդ	” . . . . .	40	”

Այլ և հարսառի ժամանակ կրնա  
քահայրը և փեսայն հարսին քահա-  
նային պարտաւոր են նուէր մը տա-  
լու, նոյնպէս և զկնի Թագաւուծի  
միայն կնքահայրը փեսային քահա-  
նային Պօակդրամ կամ Թագվերաց  
անուամբ նուէր մի ևս ունի տալու,  
որ ևս այս նուէրները թէ հարսին, և  
թէ փեսային քահանաներուն, ազ-  
գովիմբ խաչին արժէքին նայելով այս-  
պէս որոշուած է :

Խաչ	նուէր	Կնքահօր
600 . . . . .		ըստ հաճոյից
400 . . . . .		100 շնորհ
300 . . . . .		75 ”
200 . . . . .		50 ”
150 . . . . .		40 ”
100 . . . . .		30 ”
75 . . . . .		20 ”

ԿԱՆՈՆ Ե

Հին սովորութիւններէն մէկն է  
փեսայացուն ընծան, որ (ըռզակ ա-

նունով) կուտայ հարսին. նմանապէս  
 հարսնացուն իր բերած օժիտէն (Ճէ-  
 չէզէն) զատ՝ բանի մը կտոր հագու-  
 տի ծրարներ (պօղչալըզ անունով)  
 կամ ուրիշ ոսկեղէն կամ արծաթեղէն  
 բաներ կը պատրաստէ ընծայել փե-  
 սին, կամ անոր հօրը, կնքահօրը և այլ  
 մերձաւոր ազգականներուն: Արդ՝  
 այս կերպ առուտուրէն՝ բուն առջի  
 անգամին ինչ սոսկալի ատելութիւն-  
 ներ, կռիւներ ու տարաձայնութիւն-  
 ներ պատահած կան նէ, ամենուն  
 յայտնի է. դեռ ընտանեկան սէրը չի  
 հաստատուած անհաշտ թշնամութիւն  
 իրար ատելու դիպուածները, հազար  
 ու մէկ անգամ տեսնուեր ու լսուեր  
 է. ահա այստե՛նաւեր ընծայատու-  
 թեան գործը բոլորովին արգիլեալ է,  
 և խողովը որոշեց թէ փեսին տալիք  
 ընծան, թէ հարսին բերելիք օժիտը՝  
 այն կերպով ընելու, որ բնաւ մէկը  
 չի համարձակի կանոնաց սահմանէն  
 դուրս բան մը ընել կամ երկու կող-  
 մանց իրարու սաչը անունով ընծաներ

տալ, Թէ Հարսնիքէն առաջ, և Թէ վերջը: Իսկ հարսին տալիք ըոզակը անպատճառ պսակման ժամանակը պիտի արուի, չէ Թէ հարսառ գնալու առե՞ննին:

Ըջողակներուն արժէքը.		Ղուրուշ	
Ա. աստիճանի (էլա		15000	էն 20000
Երկրորդինը . . . . .		12000	էն 15000
Ա. աստի. (էլա էսնաճին)		8000	էն 10000
Երկրորդինը . . . . .		4000	էն 5000
Ա. կարգի (էվսառ էսնաճ)			2500
Երկրորդինը . . . . .			1000
Ա. կարգի (էանա էսնաճ)			500
Երկրորդինը . . . . .			150

Հարսնացունե- րուն ճէհէղի արժէք	ճէհէղի արժէք.	Թ.էլփէչէ էակուխ	
	Ղուրուշ.	Տիրէմ.	
Ա. աստ (էլա)	15000էն 20000	խաս	100
Երկրորդինը	12000էն 15000	”	80
Ա. (էլա էսնաճ)	8000էն 10000	”	70
Երկրորդինը	4000էն 5000	”	60
Ա. (էվսառ էսնաճ)	2500	”	50
Երկրորդինը	1000	”	40
Ա. (էան էսնաճ)	500	խամ	50
Երկրորդինը	150	”	40



Ահա այս կանոններէն դուրս բնաւ  
մէկ ստակի մը ընծայ կամ այլ ինչ,  
եթեւ կողմէն ալ պիտի չտրուի :

ԿԱՆՈՆ 2 .

Արովհետեւ հինուոց սովորութիւնն  
է, որ հարսին քողքը փեսայն կը խորը-  
կէ, ուստի կը պարտաւորին որ այս  
կանոնադրութեան ցուցակին համե-  
մատ միայն քողքը առնեն և տան,  
որուն թէ վայելչութեանք և թէ ար-  
ժէքին կողմանէ տեսակները որոշելով  
ստորագրած է. իսկ հարսնացուին  
պէտք եղած ոտքի ազանելիքները աղ-  
ջկան կողմէն պիտի ըլլայ, բնաւ ոս-  
կիէ՝ արծաթէ՝ կամ ինչ և իցէ զարդ-  
մը չի գտնուելով վրան :

Իսկ Հարսնիքի մոմերը տալը որ կըն-  
քահայրին սովորութիւնն է, անոր  
համար ալ քողքին արժէքին համե-  
մատ որոշ արժէքներով կշառքին չա-  
փը հոս նշանակուած է, որ նոյն չա-  
փով անսպառճառ Մայր Եկեղեցւոյ  
մէջ Ազգային Հիւանդանոցի մոմա-  
տան ծախարանէն պիտի առնուի. որ

հոն ըստ Ազգային նորոգ սահմանադրութեան պատրաստ մոմեր կան հինգ աստիճանով, որոնց շահը Ազգային շիւանդանոցի խղճալեաց ապրուստն է. ու Հարսնիքէն ետև նոյն աւելորդ մոմերը իւր կողմի Եկեղեցւոյն ընծայ ընելու է :

Քողքերուն որոշեալ տեսակները և Հարսնիքի մոմերուն կշառքը	Մոմ	
Ա. աստիճանի (էլա)	10	Հօխանոց
Երկրորդ աստիճանի	1	”
Երրորդ ”	4	”
Չորրորդ ”	5	”
Հինգերորդ ”	2	”

ԿԱՆՈՆ Է ,

Հարսանեաց օրը անխտիր ո՛ր և իցէ ծանօթներ կամ բարեկամներ Հարսնիք հրաւիրել պիտի չըլլայ՝ թէ Ազգային ըլլայ թէ օտարազգի. այլ փեսասն, իւր ծնողքը, եղբայրները, քոյրերը, և կնքահայրն ու կնքամայրը, ու տաներէց Քահանայն պիտի հրաւիրուի :

Կիրակի կէս օրին՝ որ հարսառ պի-  
տի երթան, յիշեալ անձինքներէն զատ  
մէկ մարդ մը չի պիտի երթայ բնաւին  
անանկ որ արք և կանայք վեց կամ  
ութը հոգի պիտի ըլլան, և հարսին տը-  
ուելու ըզգակը հետ չիպիտի տանին :

Հարսնացուն փեսին տունը բեր-  
ուելուն պէս անմիջապէս Հալաւն  
օրհնուի, և թէ հարկաւորի փեսա-  
յացունին կամ ծնողացը խնդրանօքը  
աւելի քահանայ կանչել, նոյն կող-  
մի Եկեղեցիէն մէկ կամ երկու քա-  
հանայ հրաւիրեն, որ ձայնակից ըլ-  
լան տաներէցին :

### ԿԱՆՈՆ Ը

Հարսնացուն տունն ալ չի պիտի  
հրաւիրեն դուրսէն մարդ՝ թէ Ազ-  
գային թէ օտարազգի, մանաւանդ  
Հարսանեաց ըաղնիքին կանայք բազ-  
մութեամբ երթալով կերակուր և ըմ-  
պելիք տանելու չեն բնաւ. աւելորդ  
ու անվայելուց զարդերով իրենք ի-  
րենց (միւրվէթը տեսանք ըսելով)

հանդէսներ չընեն, այլ ամեն տեղ պարկեշտութեամբ ըլլայ շարժմունքնին :  
 Հարսնացուին տունը միայն ծնողքը, եղբայրները և բոյրերը պիտի դըռներուն շաքաթ օրուընէ : Փեսայացուին կողմէն հարսառ գալը՝ որ կիրակի կէս օրին պիտի ըլլայ, թէ որ հարկ ըլլայ նէ՝ մօտաւոր ազգականներէն կամ դրացիներէն հրաւիրուին՝ որ հարսնացուին Նշանին օրհնութեան ժամանակը ներկայ ըլլան, և հետ օրհնութեան զանոնք՝ մէկ մէկ շաքարեղէնով և քաղցր ըմպելիով պատուելը ներեալ է. բայց հարսը տանելէն ետև եկող հարսնակորները բոլորն ալ բարեմաղթելով անմիջապէս իրենց տունը դառնան. հարսին երթալու տեղը մօտ ըլլայ նէ, քողբով տանելը ներելի կ'ըլլայ. եթէ հեռու՝ հարկաւ պիտի ծածկուին քաղաքիս սովորութեանը պէս, ու հարսին տնէն մէկը չի պիտի երթայ փեսային տունը՝ բաց ՚ի հարսնքուրէն :

ԿԱՆՈՆ Թ.

Պսակի խորհուրդին կատարումբ պիտի ըլլայ երկուշաբթի առտուն կանուխ, որ տաներէցին հեռքանի քահանայք և վարդապետք հրաւիրեալ են նէ, կը կատարեն ամենայն երկիւղածութեամբ. այս ևս կը պատուիրեմք որ հեռեկալ երկուշաբթի օրին իրիկունը, Հարսնիքին տունը բնամարդ մը չի պիտի գտնուի, թէ հարսին և թէ փեսին կողմէն, եթէ բարեկամ և եթէ ազգական, որովհետև արգիլեալ է:

ԿԱՆՈՆ Ժ.

Հարսանեաց տները բնաւ դուրսէն սպասաւորներ չի գտնուին, և ոչ փեսացուն տանը մէջ պիտի գերծուի. այլ ինչպէս ամեն անգամ, այնպէս ալ հարսանեաց օրը սափրիչին խանութը երթալ ու հոն գերծուիլ կը հարկաւորի:

Կերակուրի կողմանէ Հարսանեաց տանը սովորական կերպը պահելու է. բայց Հարսնիքի անուամբ անուշեղէն

կամ այլ տեսակ աւելորդ ու տելիքներ  
բնաւ չըլլալէն զատ, ոչ փեսին կող-  
մանէ հարսին տունը, և ոչ հարսին  
կողմանէ փեսին տունը, ու տելիք կամ  
ըմպելիք խրկուելու է. նմանապէս  
հարսառին ժամանակ փեսին կողմէն  
պարգևներ չի պիտի տրուի հարսին  
տունը, և ոչ յետ հարսանեաց փեսին  
տունը հարսին կողմանէն եկողները  
պարգև տալու են՝ որովհետև ազգո-  
վին արգիլեալ է:

### ԿԱՆՈՒՆ ԺԱ .

Հարսնատեսութեան գնալու օրեր-  
նին՝ (որ է եէտի) և ձեռք պագի օրը  
բնաւ երբէք կերակուրի պատրաս-  
տութիւն չի պիտի ըլլայ, այլ միայն  
շաքարեղէն մը, ըմպելի մը և խահվէ  
մը ըլլալու է. ու նաև Հարսանեաց  
համար բաղնեպաններուն աւելի ըս-  
տակ պահանջելը լսած ըլլալով, կը  
ծանուցանեմք թէ ուր որ պատահի  
այնպիսի ծանր պահանջմունք, Պատ-  
րիարքարանս իմաց տրուի, որ այն

ճանրութիւնը ինչ և իցէ կերպով արգիլելու ճարը հոգացուի :

ԿԱՆՈՆ ԺԲ

Հարսանեաց տանը մէջ ստակ ցըրուելու սովորութիւնը արդէն խափանուած է. նմանապէս և հարսին գրպանը (ձէպը) ստակ ձգելու անպատշաճ սովորութիւնն ալ բոլորովին արգիլուած է. ու նաև երեստեսէ ըսուած պարգևները, բնաւ մէկ կողմէն չի տրուին, այսինքն ոչ փեսայն, ոչ անոր ծնողքը՝ և ոչ կնքահայրը կամ կնքամայրը, և ոչ ազգականները, կամ գրսէն բարեկամները : Նոյնպէս ալ փեսին թէ հարսառի և թէ ձեռքպագի օրերը հարսին կողմանէ, մատնի կամ այլ ընծայ բնաւ չի պիտի տան, և ոչ փեսայն պիտի ընդունի :

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ազգային զեղխուհներուն պատճառ եղող անպատեհ սովորութիւնները արգիլելու համար, այս օգտա-

կար կանոններուն լաւագոյն բարեկարգութիւններ յառաջ բերելիքը շուտով կը ճանչնան խելահաս եղողները. ուստի ամեն զգաստ և խոհեմ մարդիկ պիտի զգուշանան որ այս կանոնադրութեանցս հակառակ շարժելու մէկուն չի թողուն . որ բարխտովորութիւնները արմատանալով հասարակաց մէջ, օր աւուր ազգատութեան առաջն առնելու ճարը նայուի, և Ազգը խաղաղութեամբ ու անդորրութեամբ աւելի պայծառանալու, և զարգանալու արժանաւորի յաջողութեամբ Տեառն և ազգասիրական խնամօք և պաշտպանութեամբ Հոգևորական և ազգային ժողովոց, որոց նպատակն է միմիայն ազգայնոց հանգստութեանը ու փառքը :





14

me

6025700

ՀՀ Ազգային գրադարան



NL0015109



1848 is unnumbered for  
Corkery's Daily Receipts and  
Receipts and Payments for 1848  
and 1849 - Receipts in. by  
and first year's work - Receipts

Corkery's Daily 1849 - 50  
indicated to be correct for  
Receipts and Payments in. by  
and first year's work:

1848 to 1850 p  
Corkery's Receipts and Payments